— Միթէ՞ կարելի է այդ հսկան, որ Բուղայ ափին մէջ չի կրցաւ սզմեցնել քու ափիդ մէջ սղմէր. յիրաւի զարմանք բանէր կը պատմես, Հայր Սուրբ:

— Կ'ուզես հաւտա՛, կ'ուզես մի՛ հավտար, եթէ հիմա նա տիրացաւ Մարդաստանի Դերենիկի յիմարութեան պտուղն է, Մարտիրոս վարդապետ յանցանք չունի. ես այդտեղ մը չի սղմող հսկան՝ սա փոքրիկ ծակին մէջ սղմեցուցի՝ նորա ձեռքը տուի… ի՞մն էր յանցանքը եթէ կաթողիկոս, իշխանաց իշխան հազար կտոր եղան, սապէս ըսին, նապէս ըսին, ձեռքեն առին, ելան գնացին:

Վարդապետը երբ այս խօսքերն կը զրուցէր, լեզուն բերնին մէջ կը պլորէր, լուսին իւր աչաց բաղմապատկեալ էր, եւ Վահրիճ իւր գինուոյն գրեթէ բոլորովին սթափած նոյն միջոցին՝ այդ Մարտիրոս անուան մտքին ամբողջ զօրութիւնը զտէր էր: Ուստի զուարթ դէմքով ջանալով իր վիճակը ծածկել, ըսաւ.

— Իմ պատուական Հայր Սուրբ, դու շատ խելօք եւ հնարագէտ մարդ ես, դու լաւ գիր նաեւ գիտես, վասնզի Աշոտ Արծրունուոյ պէս մեծ իշխանի ատենադպիր եղեր ես. այդ անպիտանն էլ քեզ մոռցեր է:

— Իրեն այնպէ՛ս ծառայութիւն ըրի, որ սատանան չի կրնար ընել, մէկ թուղթ մը գրեցի, թուղթ մը գրեցի, որ գաւառ մը իրեն օժիտ բերաւ… ի՛նչ աչքերդ կը բանաս… մե՛ղք աշխատանացս… այնչափ լաւութիւն, հը, բոլոր սա փլփլած վանքին համար, տարի մ'էր, որ թափառական կը շրջէի այդ քու Գուրգէնի երկիւղեն… վերջը իմացայ, որ դա մոռացկոտ մարդ է, ոչ բարեկամը գիտէ, ոչ թշնամին… էլ չեմ կարող… գլուխս կը շր… կը դառնա, ես այստեղ լաւ մը քնեմ…

Եւ իրօք մարդը երկնցաւ. Վահրիճ էլ դիմացը վերարկուն քաշեց՝ կէս քուն, կէս արթուն կը քնէր՝ նորա խորդալուն ձայնը երբ յանկարծ դադրէր աչքերը կը բանար, որ մարդը չի փախցնէ: Երբ արշալոյսը սկսաւ, ժողվտեցաւ, եւ շիտակ քաղաքը շունչն առաւ: